



ՀՀ բնակահայտության նախարարություն

«Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ/00035799 Ծրագիր

Սպիտակ քաղաքի «Կենտրոն-1» թաղամասի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգի գործարկման ծրագիր

2001-03թթ. Սպիտակ քաղաքի «Կենտրոն-1» թաղամասում Լինսի հիմնադրամի միջոցներով կառուցվել և շահագործման է հանձնվել չորս հարկանի 23 բազմաբնակարան շենքեր:

Շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումն, ըստ նախագծի, պետք է իրականացվեր թաղամասային կաթսայատնից կենտրոնացված եղանակով: Այդ նպատակով ՀՀ բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցվել է կաթսայատուն և մոտ 650 գ.մ երկարությամբ 4 խողովականի արտաքին ջերմային ցանց:

Թաղամասի ջերմամատակարարման համակարգի շինմնոտաժային աշխատանքներն ավարտվել են 2003թ. նոյեմբեր ամսին: Սակայն հիդրավիկական փորձարկումներ կատարվել են միայն կաթսայատան համար և համակարգը չի գործարկվել:



Սպիտակ քաղաքի «Կենտրոն-1» թաղամասը

ՄԱԶԾ/ԳԷՖ «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի կողմից կատարվել է նշված համակարգի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն: Պարզվել է, որ ոչ մեծ ներդրումներով կարելի է գործարկել էներգաարդյունավետ և հուսալի ջերմամատակարարման համակարգ, որը մատչելի գներով կարող է ապահովել նրանից սնվող բնակելի շենքերի կենտրոնական ջեռուցումը:

2007թ. մարտի 22-ին Սպիտակի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ի միջև, ՄԱԶԾ/ԳԷՖ «Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում ստորագրվել է

Փոխըմբռնման հուշագիր, ըստ որի ծրագիրը պարտավորվում է աջակցել Սպիտակի քաղաքապետարանին Սպիտակ քաղաքի «Կենտրոն-1» թաղամասի 23 բազմաբնակարան շենքերի ջերմամատակարարման համակարգի գործարկման աշխատանքների իրականացմանը:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ֆոնդի հոգաբարձուների խորհուրդը, 2007թ. հունվարի 1-ի N1/2007 իր որոշումով, հավանություն տվեց Ծրագրի՝ ջերմամատակարարման համակարգի վերականգնմանն ուղղված բաղադրիչներին: Սույն բաղադրիչը ֆինանսավորվել է ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագրի շրջանակներում:



«Կենտրոն-1» թաղամասի կաթսայատունը

Ծրագրի ընդհանուր ծախսը 24.12 մլն ՀՀ դրամ է, որից մոտ 10 մլն՝ սարքավորումների և մոտ 14 մլն՝ շինարարական աշխատանքների գծով, ներառյալ.

- արդի էներգաարդյունավետ ալրիչներ, ջերմաստիճանի կարգավորիչներ, ընդարձակման անոթներ,
- ջրաչափեր, ջերմաչափեր և գազի հաշվիչներ,
- ցանցային և սնող պոմպեր,
- բալանսավորման փականներ՝ շենքի ներքին ցանցերի խողովակասյուների համար,

- ջերմամատակարարման արտաքին և ներքին ցանցերի հիդրավլիկական փորձարկում,
- համակարգի թերությունների վերացում:

Վերականգնման աշխատանքները սկսվել են 2007թ. և ավարտվել են 2007-2008թթ. ջեռուցման սեզոնի սկզբին: Սակայն համակարգը չէր գործարկվել, քանի որ հիդրավլիկական փորձարկման ընթացքում հայտնաբերվել է մի շարք տեխնիկական թերություններ: Դրանց մասնակի վերացումը թույլ է տվել 2008-2009թթ. ջեռուցման սեզոնին կենտրոնացված ջերմամատակարարմամբ ապահովել 7 շենքեր. 2008թ. նոյեմբերի 18-ից 2009թ. ապրիլի 1-ը:

Համակարգը շահագործում էր «Հալլեյ» ՍՊԸ և Թորոսյան փ. N17-23 բնակելի շենքերի 56 բնակարաններ (կամ բնակարանների 70%-ը) ապահովվեցին կենտրոնական ջեռուցումով: Մնացած բնակարանները համակարգին չեն միացվել, քանի որ դրանց տերերի մշտական բնակավայրը Սպիտակ քաղաքում չէր: Բնակարանների տերերի հետ կնքվել են ջերմամատակարարման պայմանագրեր:

2008-2009թթ. ջեռուցման սեզոն

2008-2009թթ. ջեռուցման սեզոնում ՄԱԶԾ/ԳԷՖ փորձագետները և «Համատիրության սեփականատերերի ազգային ասոցիացիա» ՀԿ-ն իրագործեցին ջերմամատակարարման համակարգի աշխատանքի մոնիտորինգ: Բնակիչների արձագանքների, ինչպես նաև 22 խոցելի ընտանիքների բնակարաններում տեղադրված ջերմաստիճան գրանցող սարքերի ցուցումների հիման վրա պարզվեց, որ կենտրոնական ջեռուցումը պատշաճ որակի էր: Նույն եզրահանգմանը եկան ՀՎԷԷՀ փորձագետները՝ աղքատ ընտանիքներին մատուցված ջրուցման ծառայությունների մոնիտորինգի հիման վրա:

Ջեռուցման սակագինը որոշվել է շահագործման և պահպանման ծախսերի հիման վրա՝ ամսական 300 դրամ/բ.մ. չափով: Ամսական վճարումները հաշվարկվել են ըստ սենյակների քանակի և կազմել 15 հազ. դրամ 1, 20՝ 2, 25՝ 3 և 27՝ 4 սենյականոց բնակարանի դեպքում:



Սպիտակի քաղաքապետը և Ծրագրի փորձագետները այցելում են ծրագրի տարածքը

Ջեռուցման դիմաց վճարների հավաքագրման մակարդակը բավականին բարձր էր՝ մոտ 80 տոկոս: Ջեռուցման այդպիսի փոքր համակարգերը շատ զգալուն են սակագների մեծության նկատմամբ, քանի որ դրանցով որոշվում է համակարգի մատչելիությունը: Այդ պատճառով Սպիտակի քաղաքապետարանը և Ծրագիրը որոշեցին ընդլայնել համակարգը, հարևան շենքերը միացնելով «Կենտրոն-1» շրջանի կաթսայատանը: Դրանով նախատեսվում է մեղմել բնական գազի զնեքի զգալի աճի և ՀՀ դրամ - ԱՄՆ դոլար փոխարժեքի ազդեցությունը ջեռուցման սակագնի վրա: Այլապես համակարգին արդեն իսկ միացրած 7 շենքերի բնակիչների կողմից չվճարման լուրջ խնդիրներ կառաջանան:

Այսպիսով, համակարգի ընդլայնումը կարևոր է ջեռուցման համակարգի կենսունակության համար: Այդ նպատակով նախատեսվել է կենտրոնական ջեռուցման համակարգի ընդլայնման համաֆինանսավորման գծով Սպիտակի քաղաքապետարանի և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համակարգին միացման ֆինանսավորման գծով ՀՎԷԷՀ հետ համագործակցությունը:

2009-2010թթ. ջեռուցման սեզոն

Սպիտակի քաղաքապետարանի և Ծրագրի կողմից իրականացված համատեղ աշխատանքի արդյունքում ջեռուցման համակարգին միացվել են ևս 5 շենք: Դրնացում հին մարտկոցները փոխարինվեցին նորերով՝ Ծրագրի, և բաշխման ցանցը վերանորոգվեց՝ քաղաքապետարանի միջոցներով:

Իր հերթին, ըստ Ծրագրի և ՀՎԷԷՀ միջև կնքած Փոխըմբռնման հուշագրի, ՀՎԷԷՀ տրամադրել է կենտրոնական ջեռուցման համակարգի շահագործողին սուբսիդիաներ 7 բազմաբնակարան շենքերի իրավասու տնային տնտեսությունների՝ համակարգին միացումն ապահովելու համար:

Ըստ Ծրագրի, Սպիտակի քաղաքապետարանի և «Հալլեյ» ՍՊԸ միջև կնքած համաձայնագրի, այդ միջոցները պետք է ուղղվի միայն էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցներին, ինչպես նաև համակարգի ընդլայնմանը և կատարելագործմանը՝ դրա կայուն աշխատանքն ապահովելու նպատակով: